ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2022 թվականի N 1985 - Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՈՒ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 3-րդ և 57-րդ կետերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և «Ստեպ Լոջիկ Յուգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2017 թվականի նոյեմբերի 16-ին կնքված վիրտուալացված հաշվողական համակարգի ապարատածրագրային կոմպլեքսի նախագծման, մատակարարման և ներդրման ծառայությունների ձեռքբերման թիվ ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/3 ծածկագրով գնման պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. պայմանագրի 2.4-րդ կետի 2.4.6-րդ ենթակետը «2018 թվականի սերնդի համակարգերով» բառերից առաջ լրացնել «առնվազն» բառով.

բ. պայմանագրի N 1 հավելվածի 2.1-ին կետը «ըստ (Gartner Magic Quadrant 2016 Leaders աղյուսակի ապրանքանիշերի» բառերից հետո լրացնել «(կամ այդ ապրանքանիշերի կողմից սերտիֆիկացված/հավաստագրված ապրանքանիշերի)» բառերով,

գ. պայմանագրի N 1 հավելվածի 4.1-ին կետում «2,4» թիվը փոխարինել «2,1» թվով,

դ. պայմանագրի N 1 հավելվածի N 1 ցանկի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը փոխարինել համապատասխանաբար սույն որոշման N 1 հավելվածի ցանկի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով.

2) կասեցնել պայմանագրի 5.3-րդ կետով սահմանված Կատարողի նկատմամբ հաշվարկվող տույժերի հաշվարկը և պայմանագրով սահմանված, ներառյալ սույն որոշումից բխող բոլոր պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում զիջել դրանք: Ընդ որում, սույն որոշման 3-րդ կետով սահմանված ժամկետում ապրանքների չմատակարարման դեպքում տույժերը հաշվարկվում են նաև կասեցման ժամանակահատվածի համար:

2. Ընդունել ի գիտություն, որ Կատարողից գանձվելու է պայմանագրով նախատեսված տուգանքը՝ 3,089,206 դրամ գումարի չափով, պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը կազմող և որպես պայմանագրի ապահովում ներկայացված գումարը՝ 61,784,122 դրամ: Ընդ որում, նշված գումարները հաշվանցվում են ապրանքների մատակարարման և ծառայության մատուցման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

3. Սույն որոշման N 1 հավելվածում ներառված ապրանքների մատակարարման ժամկետ սահմանել պայմանագրում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիրը կնքելուց հետո 6 ամիս, իսկ տեղադրված համակարգի Երաշխիքային սպասարկման ժամկետ սահմանել համակարգը տեղադրելուց և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից ընդունվելուց հետո 3 տարի: Ընդ որում, Կատարողը մինչև սույն կետով սահմանված ժամկետում մատակարարում կատարելը, շարունակում է ապահովել պայմանագրի շրջանակում ներդրված և փոխարինման ենթակա, սակայն չփոխարինված համակարգերի սպասարկումը:

4. Սույն որոշման 3-րդ կետով նախատեսված համաձայնագրի կնքման նախապայման է հանդիսանում Կատարողի կողմից պայմանագրի չկատարված մասի՝ 338,967,203 դրամի, 20 (քսան) տոկոսի չափով սահմանված կարգով պայմանագրի ապահովման ներկայացումը՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

5. Ընդ որում, պայմանագրի ապահովման 10 (տասը) տոկոսը Կատարողին վերադարձվում է սույն որոշման 3-րդ կետով սահմանված ժամկետում մատակարարումներ կատարելուց և դրանք պայմանագրով սահմանված կարգով Պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում: Պայմանագրի ապահովման մնացած 10 (տասը) տոկոսը Կատարողին վերադարձվում է Կատարողի կողմից պայմանագրով (համաձայնագրով) սահմանված ամբողջ ծավալով պարտավորությունների կատարման և դրանք Պատվիրատուի կողմից սահմանված կարգով ընդունվելուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանն ընդունել սույն որոշման N 2 հավելվածում նշված գույքը և այն ամրացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

7. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում, սահմանված կարգով, ապահովել սույն որոշման 6-րդ կետում նշված գույքի՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հաշվեկշռում հաշվառումը:

8. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում, սահմանված կարգով, ապահովել սույն որոշումից բխող պայմանագրում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի կնքման գործընթացի իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ